

## ՍԱՆԿՑ - ՊԵՏԵՐԲՈՒՐԳ (ՊԵՏՐՈՎՐԱԴ, ԼԵՆԻՆԳՐԱԴ)

Ռուսաստանի Հայության խոշոր գաղթօղախոններից էր Սանկա-Պետերբուրգը, որն իր ծաղկումն ապրեց XVIII-XIX դարերում:

Կայսրության առևտրի, արդյունաբերության, արաաքին և ներքին հարաբերությունների ոլորտում. Հասարակական կյանքում զգալի դեր կատարեցին նաև այստեղ հաստատված հայ ընտանիքները: Եկատերինտ Բ կայսրուհու գահակալության ասրիններին նույնպես շարունակվեցին մշակվել քաղաքական ծրագրեր Հայաստանը թուրք-պարսկական լծից աղատագրելու և հայոց պետականությունը վերականգնելու ակնկալիքով: Դեռևս մինչև ղրիմահայության տեղափոխությունը Գոն գետի ափերը մի խումբ հայ առաջադեմ գործիչներ (Հովհ. Լազարյան, Գր. Կամսարյան, Մ. Սարաֆյան և այլք) որոշակի Հույսեր էին կապում ռուսական գեներալ Հետ, սակայն միջադեպին բարդ իրադրությունը պաաճառ դարձավ, որ աստիճանարար ի չիք դառնային նրանց փայփայած եբաղանքները: Այս բոլորով Հանգերձ, Պետերբուրգը երկար ժամանակ մնաց որպես ողջ Հայության աղաաադրական ձգաումների մարմնավորման կենտրոնատեղի:

Պետերբուրգի Հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանները, թանգարաններում պահպանվող առարկաներն ու նրանց մակագրությունները արժեքավոր վկայություններ են պարունակում հայոց հոգևոր, կրթա-մշակութային կյանքի ու քաղաքական անցուղարձերի մասին: Դրանք արտացոլում են հայ և ռուս ժողովուրդների զարավոր առնչությունները:

Գրավոր աղբյուրների համաձայն Սանկա-Պետերբուրգում 1730-ական թթ. եղել է Հայկական փողոց<sup>1</sup>:

Ս. Պետերբուրգում առ այսօր պահպանվել են ճարտարապետ Ս. Ֆելտենի նախագծով 1779 թ. կառուցված Հայկական երկու եկեղեցիներ, որոնցից մեկը՝ Ս. Եկատերինան, գտնվում է Նևսկու պողոտայի վրա, իսկ մյուսը՝ Ս. Հարությունը՝ Վասիլևյան կղզու Սմոլենսկյան Հայկական գերեզմանատանը:

### ՍՄՈԼԵՆՍԿՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Այս գերեզմանոցում են թաղված բաղմաթիվ Հայրդիներ, որոնց հուշակոթոնները, ցավոք, գտնվում են բարձիթողի վիճակում. շաա հուշարձաններ ընկած են իրենց պաավանդաններից, ծածկված են խիտ բուսականությամբ կամ չարամտորեն ջարգոտված են: Սյս ամենի մասին մենք բողոքեցինք Պետերբուրգի հուշարձանների պահպանման Գլխավոր վարչության ղեկավարությանը, որը խոստացավ առանձնակի ուշագրություն գարձնել Հայկական հուշարձանների պահպանությանը:

Կոթողային հուշարձանների մեջ աչքի է ընկնում Ռուսաստանում Հայկական տպաղրության գործի սկզբնավորող Գրիգոր Խալգարյանի ապանաքարը: Տապանագիրը վկայում է. որ Գր. Խալգարյանը ծնունդով եղել է Սպահանից, մանկության ասրիններն անց է կացրել Նոր Ջուղայում, ապա շրջագայել է Հնգկաստանում, Սնգլիայում և այլուր: Լոնգոնում եգած ժամանակ ձուլել է ավել հայերեն առուեր ե առաջին անգամ այսաեգ Հրաաարակել «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցոյ Հայաստանեայց: Թարգմանութիւն ի հայկական լեզուէ ի լաաին բարբառ ի Յոհաննիսէ Սկրոգերանէ գերմանացոյ: Եւ արաահանեալ ի Գանձ Արամեան կոչեցեալ զրգոյն աշխատութեամբ Ջուգայեցի Խօջամալի որգւոյն Գրիգորի, ի Լոնգոն տպ.

<sup>1</sup> Ж. Ананян, В. Хачатурян, Армянские общины России, Ереван, 1993, с. 39.